«ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Բանավոր խոսքի զարգացումը բառապաշարի հարստացման և նոր մեթոդների միջոցով

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ՝ Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հասմիկ Բեյբության

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Գոհար Մանուկյան

ԴՊՐՈՑ՝ Արծվանիստի միջն. դպրոց

Մարտունի 2022 թ.

Բովանդակություն

1. Ներածություն…….....3
2. Գրական ակնարկ…….....5
3. Փորձարարական հետազոտություն
3.1 Խմբի նկարագիրը…….....14
3.2 Փորձարարական դասեր
3.2.1 Փորձարարական դաս – 1…….....15
3.2.2 Փորձարարական դաս - 2…….....15
4. Եզրակացություններ…….....19
5. Օգտագործված գրականության ցանկ…….....22
6. Հավելվածներ…….....23
- Դասապլան - 1…….....23
- Դասապլան - 2…….....24

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒսուցման գործընթացին վերաբերող ցանկացած հետազոտական աշխատանք նպատակ ունի բացահայտել տվյալ առարկայից տվյալ դասարանում սովորողների հիմնախնդիրները,հատկապես այն հիմնախնդիրը, որը տևական բնույթ է կրում և երևում է աշակերտների մեծ մասի մոտ: Միջին դպրոցում մայրենի լեզվի ուսուցման հիմնական նպատակադրումը աշակերտի բանավոր և գրավոր խոսքի զարգացումն է, որի ձևավորման գործընթացը սկսվել էր դեռևս տարրական դասարաններից: Բանավոր խոսքը զարգացնելու համար կարևոր են՝

. կարդացածի ընկալում, տեքստի ենթիմաստի ըմբռնում.

. տեքստի բովանդակության հակիրճ և հանգամանալից վերարտադրություն.

. տեքստի լեզվառճական և պատկերային համակարգի ըմբռնում.

. բառապաշարի շարունակական հարստացում և բառիմաստի նրբերանգների ընկալում.

. տեքստից սովորած բառերի , պատկերավոր արտահայտությունների նորովի կիրառություն.

. բանավոր խոսք կազմելու կարողության զարգացում.

. ստեղծագործական աշխատանք ըստ տրված տեքստի.

. դեպքի, որևէ երևույթի, պատկերի նկարագրություն գեղարվեստական , գիտական և խոսակցական ոճերով.

. հետազոտական տարրական աշխատանք կատարելու , անհրաժեշտ տեղեկատվություն հավաքելու, համակարգելու և դրանից օգտվելու կարողության զարգացում.

. դասարանի առջև հիմնավորված խոսքով հանդես գալու նախապատրաստում և ելույթ.

. դերային խաղերի մասնակցելու, գրական երկի հերոսների անունից հանդես գալու կարողություն:

Եթե կրթության առջև դրված են որոշակի նպատակներ, ապա իրականացման աստիճանը հիմնականում կախված է ուսուցչից և նրա ստեղծագործական կարողություններից և հետազոտելու հմտությունից:

Հետազոտությունները ցույց են տվել , որ բոլոր դասարաններում սովորողները դժվարանում են բանավոր կերպով արտահայտել իրենց մտքերը բոլոր առարկաներից: Վերջիվերջո, ի՞նչ է բանավոր խոսքը:
Նախ՝ խոսքը լեզվի իրական վիճակն է, իսկական գոյը. խոսքի մեջ է, որ կոնկրետանում, միս ու արյուն է ստանում մեր լեզվական պաշարը, խոսքի, որ գոյություն է ստանում ինչպես խոսելու և գրելու , այնպես էլ կարդալու և լուռ, ինքնին մտածելու ժամանակ:Այլ կերպ ասած՝ խոսքը, որպես հաղորդակցման ու մտքերի դրսևորման միջոց, նույն լեզուն է՝ գործողության մեջ: Լեզվի և խոսքի փոխհարաբերությունը նման է ընդհանուր կամ ընդհանրապես վերցված լեզվի և կոնկրետ որևէ ժողովրդի լեզվի կամ գիտակցության ու մտածողության փոխհարաբերությանը:

2. ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ի՞ՆՉ Է ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԸ

ՈՒսուցման գործընթացում ավելի է կարևորվում բանավոր խոսքը: Բանավոր խոսքը, որպես հաղորդակցման հիմնական միջոց և ազգային լեզվի գոյաձև , արտահայտվում է հնչյունների միջոցով , որոնք յուրաքանչյուր կոնկրետ խոսողի մոտ տարբեր ձևավորում ու անհատական դրսևորումներ կարող են ունենալ, սակայն հաղորդակցման ժամանակ նրանք հանդես են գալիս որպես պատմականորեն ձևավորված ու ընդհանրացված հնչույթների դրսևորումներ:

Բանավոր խոսքի համար բնորոշ առանձնահատկություններ են նաև ձայնի ելևէջն ու հնչերանգը, արտասանության բնական արագությունն ու ձայնի բնական բարձրությունը, տրամաբանական, բառային ու հոգեբանական շեշտերը, և, վերջապես, նաև գրական լեզվի ուղղախոսությունը, որպեսզի այն կատարյալ ու անթերի լինի, ճիշտ արտահայտի կամ, ավելի ճիշտ , հարազատորեն փոխանցի սովորողի մտքերը, զգացմունքներն ու ապրումները: Բանավոր խոսքն իր արտահայտչականությամբ ու հուզականությամբ ավելի բնական, կենդանի, տպավորիչ ու ազդեցիկ է, քան գրավոր խոսքը: Բանավոր խոսքը իր անմիջականությամբ ու արտահայտչականությամբ , մարդկային հույզերի , ապրումների, տրամադրությունների ու զգացմունքների ճիշտ արտահայտման ու դրանք լսողին փոխանցելու տեսակետից ավելի մեծ հնարավորություններ է ստեղծում, քան գրավոր խոսքը: Սովորողները տարրական դպրոցից միջին դպրոց փոխադրվում են պատմելու, խոսելու, տեսածն ու լսածը վերարտադրելու որոշակի կարողություններով ու հմտություններով, որոնք օգնում են նրանց հետագա առաջընթացի ու մտավոր զարգացման համար: Հենց այս հարցում մեծ է ուսուցչի դերն ու նշանակությունը: Սովորողների խոսքը զարգացնելու համար ուսուցիչը պետք է իմանա խոսքի բաղադրիչները, որպեսզի ուշադրությունը կենտրոնացնի յուրաքանչյուր բաղադրիչի զարգացման վրա: Խոսքը բաղկացած է երեք հիմնական բաղադրիչներից՝ բառապաշար.

քերականություն.

խոսք կառուցելու կարողություն:

Ընդ որում՝ բառապաշարն ու քերականությունը օբյեկտիվորեն գոյություն ունեն, իսկ խոսք կառուցելու կարողությունը միանգամայն սուբյեկտիվ է: Սակայն երեք բաղադրիչն էլ հանդես են գալիս փոխկապակցված ձևով: Բանավոր խոսքի համար կա նաև ուղղախոսությունը կամ գրական հայերենի արտասանությունը, բայց սա խոսքի համար արտաքին հատկանիշ է: Ճիշտ է, բառապաշարի հարստացման ու քերականության ուսուցման աշխատանքները առանձին են տարվում, սակայն խոսք կառուցելու կարողության մշակման ժամանակ դրանք հանդես են գալիս որպես անբաժանելի միասնություն:

ԲԱՌԱՊԱՇԱՐ

Խոսքի զարգացման համար բացառիկ կարևոր նշանակություն ունի բառապաշարի հարստացումը, որովհետև օբյեկտիվ իրականության առարկաներն ու երևույթները մեր գիտակցության սեփականությունն են դառնում բառերի միջոցով: Բառապաշարի ուսուցման համար հիմնական աղբյուր է ընթերցանությունը, չնայած առօրյա շփումը մեծերի հետ, տեղեկությունների հաղորդման բազմաթիվ արդի աղբյուրները, հատկապես համացանցը, ևս կարևոր դեր են խաղում բառապաշարի հարստացման գործում: Խոսքի զարգացման միջոցների ու ձևերի համակարգում առանձնահատուկ տեղ է գրավում ընթերցանության ու բանավոր խոսքի դասերին տարվող տարաբնույթ աշխատանքները:
Բառապաշարի հարստացումը մի անվերջ գործողություն է , որ սկսվում է երեխայի կողմից շրջակա աշխարհը ճանաչելու և գիտակցորեն այն ընկալելու առաջին իսկ օրից և անդադրում կերպով շարունակվում են մինչև նրա կյանքի վերջը, որովհետև ճանաչումն ու ընկալումը հիմնականում տեղի են ունենում բառերի մեջ և բառերի միջոցով:

Բառապաշարի հարստացման գործում մեծ ու անփոխարինելի նշանակություն ունի բառագիտության ուսուցումը:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս բաժնի ուսուցումը բացառիկ կարևոր նշանակություն ունի գործնականում խոսքի մեջ բնականորեն ճիշտ կիրառվող լեզվական ձևերի՝ բառերի թեքման, համաձայնեցման ու կապակցման, բառակապակցությունների և նախադասությունների մեջ դրանց ճիշտ արտահայտման օրենքների և օրինաչափությունների գիտակցման համար: Վերջիններիս ճիշտ կիրառությունը մարդու համար մի անսպառ գանձ է դառնում՝ իր մտքերն ու զգացմունքները արտահայտելու, իր խոհերին ու ապրումներին, նախագծումներին ու երազանքներին բառային կերպարանք տալու համար:

ԽՈՍՔ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Այս կարողությունը շատ կարևոր է: ՈՒսուցչի հիմնական խնդիրներից մեկն էլ սովորողների մեջ այդ կարողության հետագա մշակումն ու կատարելագործումը պետք է լինի այն հաշվով, որ այն վերածվի հմտության: Սա այնպիսի կարողություն է, որ մարդուն ուղեկցում է ողջ կյանքի ընթացքում:

Բանավոր խոսքի կարևոր բաղադրիչներից մեկն էլ ուղղախոսությունը կամ գրական արտասանությունն է, որը որոշակի նշանակություն ունի խոսքի և՛ ձևի, և՛ բովանդակության համար:

Բանավոր խոսքի զարգացման համար պետք է կատարել բանավոր խոսքին առաջադրվող պահանջները: Դրանք են՝ **մաքրությունը, պարզությունը, կապակցվածությունը, բովանդակալից լինելը, արտահայտչականությունը:** Սրանցից յուրաքանչյուրի կիրառումը խոսքը դարձնում է հասկանալի, լսելի և ըմբռնելի, ինչու՞ չէ՝ նաև հաճելի:

Աշակերտի բանավոր խոսքի մշակման ու կատարելագործման միջոցներն ու ձևերը բազմազան են: Դրանք սկսվում են կենդանի խոսքի ընդօրինակումից մինչև հռետորության ու ասմունքի արվեստի ձևերի ուսուցումը: նշանակություն ունի՝ որպես կենդանի, զարգացող ու ծավալվող, սովորողի հոգու հետ հաղորդակցվող , նրա հետաքրքրություններին ու որոնումներին բավարարություն տվողխոսքի:

Միջին դպրոց փոխադրված աշակերտի համար դասվարի խոսքը միշտ հաճելի է լինում, հիմնավորված, նորություններ ներկայացնող: Նա պետք է վարժվի նոր ուսուցիչներին,

այդ թվում՝ տարբեր առարկաների ուսուցիչներին: ՈՒստի ուսուցչի խոսքը պետք է լինի պարզ, հստակ, մատչելի ու գրավիչ, զգալ ու սիրել տա, շարունակաբար սովորեցնի մեր լեզվի քաղցրությունն ու բարեհնչյունությունը, հարստությունն ու ճոխությունը: Աշակերտների բանավոր խոսքի զարգացման համար կարևոր նշանակություն ունեն **զրույցները:** Դրանց թեմաները կարող են լինել տարբեր՝ սկսած ընտանիքից, ընկերներից, շրջակա աշխարհից, բնական ու հասարակական երևույթներից՝ նայած դասարանին և սովորողների տարիքային-հոգեբանական առանձնահատկություններին: Մի կողմից դա հնարավորություն է տալիս նրանց խոսել, արտահայտվել, իրենց մտքերը շարադրել, մյուս կողմից՝ ուսուցչին հնարավորություն է տալիս հղկել, մշակել ու մաքրել նրանց լեզուն, հարստացնել բառապաշարը: Բանավոր խոսքի զարգացմանը մեծապես նպաստում է նաև **հեքիաթներ պատմելը, ընկալածի վերարտադրությունը:**

Տեսածի, լսածի ու կարդացածի վերարտադրությունը ոչ միայն նպաստում է տպավորությունների ու պատկերացումների ուժեղացմանն ու կայունացմանը, այլև մեծապես օգնում է սովորողի խոսքի զարգացմանը և հնարավորություն է տալիս սովորողի տեսած գործողությունները, դեպքերն ու դեմքերը, գույներն ու ձայները, բնական ու հասարակական երևույթները, մարդկանց աշխատանքային գործունեությունն ու փոխհարաբերությունները, իր վերաբերմունքն ու ապրումները վերարտադրել համապատասխան բառերով ու արտահայտություններով, սովորել դրանց լեզվական ձև տալը:

Լսածի վերարտադրությունը նպաստում է սովորողի մեջ ուշադրության ու հիշողության դաստիարակմանը:

Կարդացածի վերարտադրությունը սովորողին օգնում է ինչպես ընթերցածը լավ մտապահելուն և աշակերտի մեջ պատմելու կարողություն մշակելուն, այնպես էլ զարգացնում ու կատարելագործում է սովորողների բանավոր խոսքը, որովհետև վերարտադրելու ժամանակ աշակերտն աշխատում է օգտագործել ուսումնասիրած բնագրում եղած բառերն ու դարձվածքները,միտքը շարադրելու ձևերն ու եղանակները: Այս ամենը մեծ չափով նպաստում է սովորողի խոսքի զարգացմանը, ուստի ուսուցման գործընթացում հատուկ ուշադրություն պետք է դարձնել կարդացածի կամ լսածի վերարտադրմանը:

Բանավոր խոսքի զարգացման տեսակետից կարևոր նշանակություն ունի առաջադրված

նյութի բերանացի կամ անգիր անելը: Բանաստեղծությունների կամ գեղարվեստական արձակ հատվածներ անգիր անելը մեծապես նպաստում է տվյալ նյութի բովանդակության խոր ընկալմանը, այդ բովանդակությունն արտահայտող բառերի ու արտահայտությունների յուրացմանը, շատ բանով օգնում է նաև խոսքի ռիթմի ու արտահայտչականության, տոնի և տեմպի մշակմանը: Աշակերտի կողմից անգիր անելը կնպաստի նրա բանավոր խոսքի զարգացմանը, նրա լեզուն կհարստացնի նոր բառերով ու դարձվածքներով, կբարձրացնի նրա խոսքի կուլտուրան:

Աշակերտի բանավոր խոսքի զարգացմանը մեծապես նպաստում են նաև էքսկուրսիաները, որոնց ընթացքում սովորողները շատ բան են տեսնում, շատ բաների մասին են իմանում, շատ առարկաների, երևույթների, դեպքերի ու մարդկանց գործողությունների, գույների ու ձայների, իրերի և երևույթների փոխհարաբերությունների մասին են տեղեկացվում, կարծիքներ հայտնում, տպավորություններ փոխանակում և դատողություններ անում: Այսպիսով, յուրաքանչյուր դաս-էքսկուրսիա ոչ միայն աշխարհաճանաչողական գիտելիքների հաղորդման կամ ամրապնդման նպատակ է հետապնդում, այլև՝ խոսքի զարգացման , որովհետև սովորողը ինչքան շատ բան գիտի, այդքան բանի մասին էլ կարող է խոսել ու արտահայտվել: Առանձնապես օգտակար են էքսկուրսիաների ամփոփման դասերը, երբ սովորողները ի մի են բերում էքսկուրսիայի ընթացքում իրենց սովորածը, պատմում են իրենց տեսածի և լսածի մասին, եզրակացություններ ու ընդհանրացումներ են կատարում:

Բանավոր խոսքի զարգացման տեսակետից օգտակար են նաև **ամփոփիչ դասերը**: Հայտնի է, որ նյութերն ունեն ամփոփելու կարիք, և անհրաժեշտ է հատուկ ամփոփիչ դաս անցկացնել տվյալ թեմայի շուրջ, որպեսզի սովորողները կարողանան այդ թեմայի վերաբերյալ իրենց սովորածը ի մի բերել, որոշակի հետևությունների հանգել: Այդ դասերին, եթե ուսուցիչը լավ է նախապատրաստում, աշակերտները սովորում են ինքնուրույն խոսք կառուցել, ընդհանրացումներ կատարել, խոսել ու դատել, ամփոփել ու եզրակացություններ անել, իսկ այդ ամենը բանավոր խոսքի մշակման ու կատարելագործման համար շատ կարևոր նշանակություն ունեն:

Աշակերտների բանավոր խոսքի զարգացմանը մեծապես կարող են նպաստել նաև ռադիոհաղորդումների, ձայնաժապավենների ունկնդրումը, համացանցից

համապատասխան նյութերի, հեռուստատեսային հաղորդումների ու կինոֆիլմերի դիտումները:

Մի դեպքում՝ վարպետ պատմողների և ռադիոխոսնակների խոսքը, իսկ մյուս դեպքում՝ արտիստների խաղն ու խոսքը շատ մեծ տպավորություն են թողնում երեխաների վրա՝ անկախ տարիքից, և նրանք ընդօրինակում են նրանց խոսքի արտահայտչական ձևերը, սովորում են նրանց նման պատմել և արտահայտվել: Տեխնիկական միջոցների օգտագործման ուղղությամբ բավականին առաջընթաց կա. և՛ հեռախոսները, և՛ համակարգիչները նպաստում են ուսումնական գործընթացի կազմակերպմանը, այդ թվում՝ բանավոր խոսքի զարգացմանը, ուրեմն և՝ բառապաշարի հարստացմանը:

Դեռևս տարրական դասարաններից մշակվում են սեփական խոսք կառուցելու կարողություն, լեզվական ճաշակ ու լեզվազգացողություն, և դրա համար ջանք չպիտի խնայվի նաև միջին և ավագ դպրոցում: Պետք է միշտ սովորողին ազատություն տալ մտածելու և խոսելու՝ հետևելով, որ նրա խոսքը բնական ու կենդանի լինի:

Աշակերտների բանավոր խոսքի զարգացմանը նպաստում է նաև **քերականության և ուղղագրության** ուսուցումը: Սովորողը իր մտքերը բանավոր արտահայտել, պատմել ու արտասանել է սովորում ոչ միայն գրականության, այլև քերականության և ուղղագրության դասերին: Նախադասություն կառուցելու, նախադասության մեջ բառերի համաձայնության և շարադասության հմտություն սովորողները ձեռք են բերում վերոհիշյալ դասերին:

Ուղղագրության միջոցով աշակերտները ոչ միայն սովորում են բազմաթիվ բառերի գրությունը, այլև արտասանությունը, որը խոսքի կուլտուրայի համար շատ կարևոր նշանակություն ունի: Ինչպես գրելիս ուղղագրական սխալը, այնպես էլ խոսելիս ուղղախոսական սխալը գրագիտության և լեզվական ցածր կուլտուրայի նշան է:

Բանավոր խոսքի զարգացման համար բացառիկ կարևոր նշանակություն ունի **խոսքի միասնական պահանջների** սահմանումը դպրոցում: Բանավոր խոսքի զարգացման ու մշակման, ինչպես և առհասարակ լեզվի ուսուցման համար լեզվական միջվայրի ստեղծումը անփոխարինելի նշանակություն ունի, և այդ ուղղությամբ պետք է անհարժեշտ աշխատանք տանել՝ դպրոցական ու դասարանական լեզվական միջավայր ստեղծելու համար: Այդ նպատակով պետք է ամենօրյա հսկողություն սահմանել, որպեսզի աշակերտները բոլոր դասերին, դասամիջոցներին, դպրոցից դուրս ու տանը խոսեն մաքուր ու գրական հայերենով, գեղեցիկ, ճիշտ, կանոնավոր, բովանդակալից ու

արտահայտիչ լեզվով, որպեսզի այն սովորողների մեջ հմտությունից աստիճանաբար վերածվի կարողության:

Սովորողների խոսքի զարգացումը ոչ միայն հայոց լեզվի և գրականության ուսուցչի, այլև մնացած բոլոր ուսուցիչների ու ամբողջ մանկավարժական կոլեկտիվի հոգածության առարկան պետք է լինի: Սխալ խոսելիս աշակերտին պետք է ուղղել ամեն տեղ ու ամենուրեք, որպեսզի նա ինքն իր լեզվի նկատմամբ մշտական հսկողություն սահմանի և խոսի այնպես, ինչպես պահանջվում է: Լեզվական միասնական պահանջներ պետք է սահմանել սկզբում դասարանի, իսկ ապա՝ համադպրոցական մասշտաբով, որովհետև դասարանում այդ անելն ավելի հեշտ է, իսկ մյուս կողմից՝ այդ փոքր միավորներից կստեղծվի նաև մեծը՝ համադպրոցականը:

Այսպիսով, բանավոր խոսքը ոչ միայն մարդու կուլտուրական լինելու հիմնական չափանիշներից մեկն է, ամենօրյա հաղորդակցման միջոցը, այլև գրավոր խոսքի զարգացման հիմքերի հիմքը:

Բանավոր խոսքի զարգացումը նախանշում է մարդու՝ իրականության հետ անխազելի կապի անհրաժեշտությունը: Հասարակական գիտակցության բոլոր ձևերն էլ բխում են իրականությունից, որովհետև վերջին հաշվով բոլորի բովանդակությունն էլ իրական կյանքն է՝ իր բազմապիսի ձևերով: Սակայն հասարակական գիտության այդ տարբեր ձևերն իրենց բովանդակությամբ, ձևով և հետապնդած նպատակներով անպայման ինչ-որ չափով տարբերվում են միմյանցից: Գեղարվեստական երկերում կյանքն արտացոլվում է ոչ թե թվերի, գիտական բնորոշումների ու ընդհանրացումների այլ պատկերների, մարդկային կերպարների, գործող անձերի, դրանց խոհերի ու զգացմունքների ցուցադրման միջոցով:

Կյանքը կերպարների միջոցով պատկերացնելն էլ հենց գեղարվեստական տարբեր ժանրերի պատկանող ստեղծագործությունների միջև եղած ընդհանրությունն է, իսկ այդ ընդհանրությունն էլ իր հերթին պայմանավորում է ուսուցման մեթոդական ձևերի միջև եղած ընդհանրությունները:

Գեղարվեստական նյութերի այդ հուսական կողմը սովորողներին հասցնելու կամ ամրապնդելու համար նրանց պետք է հոգեբանորեն նախապատրաստել: Դա կատարվում է զրույցի ընթացքում, որը գեղարվեստական ստեղծագործությունների դասավանդման մեթոդական առանձնահատկություններից մեկն է:

Մյուս առանձնահատկությունն այն է, որ գեղարվստական երկի ներգործությունն ուժեղացնելու համար հենց սկզբից եթե այն պետք կարդացվի ուսուցչի կողմից կամ ձայնագրությունների միջոցով մատուցվի սովորողին: Հայտնի է, որ գեղարվեստական գրականությունը պատկերները կերտում է խոսքի օգնությամբ, հենց դրա համար էլ այն կոչվում է խոսքի արվեստ կամ խոսքարվեստ: Այս առումով՝ լեզուն գրողի միակ զենքն է, որովհետև խոսքի միջոցով գրողն ստեղծում է մարդկային կյանքի, զգացմունքների ու հոգեկան ներաշխարհի, բնության ու շրջապատի, աշխարհի զգացական պատկերներ: Գրականության մեջ կյանքի ընդգրկման հնարավորությունները շատ մեծ են, որովհետև չկան կամ շատ քիչ են մարդկային ցգացմունքների, հույզերի և ապրումների, մարդկային խոհերի, մտորումների ու փոխհարաբերությունների այն բնագավառները, որոնք հնարավոր չլիներ խոսքի մեջ պատկերել:

Գեղարվեստական գրականության մեջ հրաշքներ գործող խոսքը ուսուցողական տեսակետից ևս բացառիկ կարևոր ու անփոխարինելի արժեք է ներկայացնում, ուստի և այս տիպի նյութերի վրա տարվող աշխատանքների մեջ մարդկային արժեքների ուսուցանումը հիմնական տեղ է գրավում: Պատկերավոր խոսքի ուսուցման ու բառապաշարի հարստացման տեսակետից գեղարվեստական գրականությունը շատ մեծ հնարավորություն ունի, որը ուսուցիչը պետք է կարողանա տեղին ու ճիշտ օգտագործել:

Գեղարվեստական գրականությունը հասարակության համար նաև հսկայական ճանաչողական արժեք ունի, որոհետև ընթերցողները գրական երկերից ոչ միայն գեղարվեստական հաճույք են ստանում, հաղորդակից են դառնում գրական բարձրարժեք խոսքին ու պատկերավոր մտածողությանը, այլև դրանց միջոցով ճանաչում են այս կամ այն հասարակարգը, ժամանկաշրջանը կամ հասարակական հարաբերությունները:

Չափազանց մեծ է նաև գրականության դաստիարակչական նշանակությունը: Գեղարվեստական ստեղծագործություններն օգնում են դաստիարակելու հոգևոր բազմակողմանի հետաքրքրություններ ու հարուստ ներաշխարհ ունեցող մարդիկ, որոնց մեջ հավասարապես զարգացած են միտքը և զգացմունքը, որոնք ընդունակ են ճիշտ հասկանալու կյանքի պահանջները, դրականը, գեղեցիկն ու առաքինին՝ մի կողմից, և՛ բացասականը, տգեղն ու անբարոյականը՝ մյուս կողմից, և՛ անկեղծորեն արձագանքել դրանց, իրենց վերաբերմունքը ցույց տալ:

Գեղարվեստական նյութերն ավանդելիս հատուկ ուշադրություն ենք դարձնում դրանց դաստիարակչական կողմի վրա: Ինչպես գործող անձերի ու նրանց կատարած գործողությունների բնութագրումները սովորողների կողմից, այնպես էլ ամփոփման ժամանակ նյութի ուսումնասիրությունից բխեցվող դաստիարակչական ու բարոյական եզրակացությունները ուսոցչին հնարավորություն են տալիս սովորողներին որոշակի տրամաբանական հետևությունների հանգեցնելու, երեխաների համար ընդունելի բարոյական նորմեր սահմանելու:

Սրանք էլ հենց կազմում են գեղարվեստական նյութերի դասավանդման մեթոդական առանձնահատկությունները:

Սակայն գեղարվեստական նյութերի միջև ևս ներքին տարբերություններ կան, որոնք պայմանավորված են դրանց ժանրային առանձնահատկություններով: Դրանք ևս որոշակի ազդեցություն ունեն դասավանդման մեթոդների ու մեթոդական ձևերի ընտրության վրա:

:

3. Փորձարարական հետազոտություն

3.1. Խմբի նկարագիրը

Բանավոր խոսքի զարգացման հիմնախնդիրը կա նաև իմ դասավանդած դասարաններում, հատկապես՝ 7-րդ դասարանում: Հիմնախնդրի լուծման համար տարբեր մոտեցումներ ցուցաբերելուց հետո որոշեցի լրջորեն զբաղվել այդ հարցով և փորձնական 2 դաս անցկացրի գրականությունից: Թեման ընտրելու հարցում ոչ մի վայրկյան չտատանվելով՝ընտրեցի Ստեփան Զորյանի <<Զրհորի մոտ>> պատմվածքը: Բացի այն, որ այն բարձրարժեք ստեղծագործություն է, նաև համահունչ է այսօրվա իրականության հետ: Որպես սահմանամերձ գոտում ապրող բնակիչներ՝ երեխաները ևս անմասն չեն կատարվող իրադարձություններից և ստեղծված իրադրությունից: Երկու դասաժամ՝ իրար հաջորդող, նպաստեցին և՛ սովորողների բանավոր խոսքի զարգացմանը, և՛ բառապաշարի հարստացմանը, և՛ հայրենասիրության դաստիարակմանը, և՛ ընկերասիրության ամրապնդմանը, և՛ պատերազմի ժխտմանը, և՛ խաղաղության անհրաժեշտության գաղափարին: Ներկայացնենք Ստեփան Զորյանի <<Զրհորի մոտ>> պատմվածքի առաջին դասի պլանը:

3.2. Փորձարարական դասեր

3.2.1. Փորձարարական դաս 1

Դասի պլանից երևում է, որ դասի ընթացքում կարևոր է ուղղորդված ընթերցանությունը: Քանի որ մեր նպատակը բանավոր խոսքի զարգացումն է բառապաշարի հարստացման միջոցով, ուստի ընթերցանության համար ընտրված էին այնպիսի հատվածներ, որոնցում շատ էին բարբառային և օտար բառերը: Փորձը ցույց է տվել, որ սովորողները դրանց գրական համարժեքները գրելուց հետո իրենց խոսքում ավելի շատ օգտագործում են հենց գրական բառերը:

Բառապաշարի հարստացումը կատարվեց նաև այդ բառերի հոմանիշներն ու հականիշները օգտագործելու ժամանակ:

Սովորողի բառապաշարը հարստացավ նաև աշխարհագրական որոշ անուններով, ռազմական տերմիններով և զինվորական կոչումների անվանումներով: Դրանք նրանց պետք կգան հետագայում՝ ՆԶՊ-ի դասերին, իսկ տղաներին՝ բանակում ծառայելու ժամանակ:

Ինքնաանդրադարձ- Դասն անցավ նախատեսվածից ավելի բուռն:

3.2.2. Փորձարարական դաս 2

Սովորողները արտահայտեցին իրենց կարծիքը պատմվածքի գլխավոր հերոսի և նրա վարմունքի դրդապատճառների մասին, խոսեցին, թե իրենք ինչ կանեին Բաղդասարի փոխարեն: Եվ այդ ամենը զուգակցվում էր նոր սովորած բառերի գործածությամբ: Հետաքրքիր մտքեր արտահայտեցին նույնիսկ ցածր առաջադիմություն ունեցող աշակերտները:

Սովորողների բառապաշարը հարստացավ մի քանի բառով, որոնք դարձան գործածական նաև առօրյա խոսքում: Նրանց կարծիքները հատկապես հստակ արտացոլվեցին Կանխագուշակումների աղյուսակ մեթոդի կիրառության ժամանակ: Եթե նորից պարապեի դասը,ավելի շատ ժամանակ կհատկացնեի բառային աշխատանքին,ոչ թե սյուժետային գծերին: Ավելի շատ կխոսեինք պատերազմի բերած

արհավիրքների մասին: Որպես սահմանամերձ գոտում ապրող և պատերազմի շունչն զգացած երեխաներ՝ նրանց մեջ տպավորվել էին ծնողների տրամադրությունները, անհանգստությունը, ապրումները: Զարգացան կապակցված խոսք կազմելու հմտությունները, լեզվական յուրաքանչյուր միավոր ներկայացվեց մեկնաբանությամբ, և գրականության ժամինառաջին պլան մղվեց բառագիտությունը, բառային իմաստաբանությունը, բառապաշարի շերտերը, խոսքի մեջ բառերի ճիշտ ընտրությունը, ուշադրություն դարձվեց հատկապես սովորողի գործուն բառապաշարի հարստացմանը: Դասը վարելիս հաշվի առնվեցին սովորողների տարիքային առանձնահատկությունները, արդեն ձեռք բերած գիտելիքների մակարդակին ու բառապաշարին համապատասխան հարցերի առաջադրումը և այլն: ՈՒղղորդված ընթերցանության օգտագործումը մեկ անգամ ևս ապացուցեց այդ մեթոդի կենսունակությունը:

Հայտնի տեսլական է, որ գրականության ծրագրերով առաջարկվող նյութերը պետք է համապատասխանեն սովորողների տարիքային հոգեբանությանը, արձագանքեն նրանց նախասիրություններին, լինեն գրավիչ, պարունակեն հետաքրքրական և նշանակալից դեպքեր և իրադարձություններ, մարդկային կրքերի բախումներ՝ բարու հաղթանակով, մարդկանց ճակատագրեր՝ հերոսական կամ դրամատիկ, նպաստեն սովորողի հոգեբանա-բարոյական դաստիարակությանը, ունենան կողմնորոշիչ նշանակություն: Այդպիսին է պատմվածքը, որի ուսուցման վերոհիշյալ դասին պահպանվել են նաև բանավոր խոսքի զարգացման պահանջները բառապաշարի հարստացման միջոցով: Դասը սովորողներին հնարավորություն տվեց բանավոր խոսքում գործածել Առաջին համաշխարհային պատերազմ, Ավստրիա, կապիտան, վաշտապետ, սպիտակ թաշկինակ թափահարել և այլ բառեր ու հասկանալ դրանց իմաստը: Զրհորի մոտ պատմվածքի դասավանդման վերջին դասը կազմակերպվեց խմբային աշխատանքի միջոցով: Ոչ մի աշակերտ նախօրոք ոչ մի առաջադրանք չէր ստացել, ուստի դասն անցավ շատ հետաքրքիր ու որոշ անակնկալ հանձնարարություններով: Պատմվածքի դաստիարակչական ու ճանաչողական նշանակությունը քննարկելիս (հատկապես՝ ճանաչողական)սովորողները օգտագործեցին դասի մեջ եղած օտար բառերը, ապա բացատրեցին դրանց գրական համարժեքները: Բնական է, որ գրական համարժեքների(բակլաշկա-տավիղ,ժուրավլ- կռունկ, կոտելոկ- շիշ և այլն) մի մասը կդառնա սովորողի բանավոր խոսքի բաղկացուցիչ մաս: Պետք է նշել նաև, որ

սովորողները, որպես գրականագիտական տեղեկություն, գիտելիքներ ստացան նաև պատմվածքի ժանրի առանձնահատկությունների մասին: Իմացան, որ Առաջին համաշխարհային պատերազմում հայերը թշնամու դեմ կռվել են Ցարական Ռուսաստանի բանակի կազմում, որ վաշտապետը ազգությամբ ռուս էր, որ ավստրիացիները կռվում էին գերմանացիների կողմից և այլն: Սովորողները, իրենց տարիքային առանձնահատկություններից ելնելով, կարողացան խոսել պատերազմի և խաղաղության մասին, գնահատել դրանք:
Պատմվածքի ուսուցումը նպաստեց ազգային գեղարվեստական մտածողության յուրահատկությունների բացահայտմանը, հայ գրականությունը որպես հայ ժողովրդի պատմական ճակատագրի և հայ մարդու կերպարի մարմնավորման ընկալմանը,գրական նյութի դաստիարակչական և ճանաչողական նշանակության գիտակցմանը,ավանդույթների շարունակականությանը: Նրանք կարողացան համեմատել և զուգահեռներ անցկացնել հարյուր տարի առաջ կատարված դեպքերի և այսօրվա իրադարձությունների միջև: Եվ յուրաքանչյուր աշակերտ կարողացավ բանավոր խոսքն արտահայտել հնարավորինս գրագետ,գործածեց նախորդ ժամին սովորած բառերն ու կապակցությունները: Խմբային աշխատանքը հնարավորություն ընձեռեց, որ խմբի անդամի կողմից արտահայտած սխալ բառերն ու մտքերը ճշտեն ընկերները, լրացնեն կամ հանդես գան նոր մտքերով:
Դասը օգնեց իրականացնել նաև գրականության դասավանդման հիմնական նպատակներից մեկը, այն է՝ բացի սովորողներին զուտ գրական երևույթներին ծանոթացնելուց, անհատի (կոնկրետ՝ սովորողի) հոգևոր ու մտավոր զարգացմանը, անձի արժեքային համակարգի ձևավորմանը նպաստելն է, որի իրականացման համար անհրաժեշտ է սովորողներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի հոգևոր ժառանգությանը, ազգային ու համամարդկային իդեալներին ու ձգտումներին, գրական հերոսների օրինակով և գրական երկերի գաղափարագեղարվեստական հարստության օգտագործումով նրանց մեջ դաստիարակել մարդասիրական ոգի, բարոյական բարձր հատկանիշներ՝ բարություն, ընկերասիրություն, ազնվություն, պատվախնդրություն, հաստատակամություն, բարեխղճություն, հանդուրժողականություն, անձնազոհություն և այլն:
Կարող է հարց առաջանալ, թե վերոհիշյալ մտքերը ի՞նչ կապ ունեն քննարկվող թեմայի հետ: Կապ ունեն, և այն էլ՝ անխզելի կապ: Վերոհիշյալ հատկությունները քննարկելիս

աշակերտներն իրենց բանավոր խոսքում օգտագործում են հոմանիշ ու հականիշ բառեր, որոնցով հաստատում կամ ժխտում են իրենց վերաբերմունքը գլխավոր հերոսի բնավորության այս կամ այն գիծը, գնահատում կերպարի արարքների ճիշտ կամ սխալ լինելը: Իսկ ինչո՞վ են արտահայտում իրենց մտքերը, եթե ոչ բառապաշարի այս կամ այն շերտին պատկանող բառերով, ինչպես նաև՝ նոր սովորած ու բառապաշարը հարստացրած բառերով ու կապակցություններով:

Տնային առաջադրանքի հանձնարարումը միտված է հենց բառապաշարի զարգացմանը: Դասի ընթացքը կարելի է երկար ներկայացնել, բայց դա մեր նպատակը չէ:

Եզրակացություններ

Դասն անցավ այնպես, ինչպես նախատեսել էի, մի փոքր ակտիվությունը շատ լիներ, ավելի լավ կլիներ:

Դասը վարելիս ոչ մի փոփոխության չէի ենթարկի դասի ընթացքը: Ինձ անակնկալի բերեց սովորողների մտածելակերպը: Նրանցից յուրաքանչյուրի կարծիքը ընկերասիրության, մարդկային հարաբերությունների, պատերազմի ու խաղաղության, հայրենիքի պաշտպանության անհրաժեշտության ու հայրենասիրության մասին իրենց տարիքային առանձնահատկություններից ու իմ նախատեսածից ավելի խորն էր ու հիմնավորված: Դա, երևի, գալիս էր նրանից, որ իրենք որոշակի չափով զգացել են պատերազմի շունչը: Շատերի ծնողները մասնակցել են 44-օրյա պատերազմին և պատմել ամեն ինչ ականատեսի աչքերով: Եվ այդ ամենը նրանք վերապատմում էին իրենց բառապաշարով ու իրենց պատկերացումներով: Պատմվածքը նրանց սովորեցրեց, որ ժողովուրդը պատերազմ չի ուզում, որ յուրաքանչյուր պատերազմ իր հետ բերում է չարիք՝ մահ, ավեր, կոտորած…Եվ նրանք իրենց արդար բերանով <<ո՛չ>> են ասում պատերազմին: Եվ ամբողջ դասարանով եկանք այն մտքին, որ պատերազմը չարիք է, խաղաղությունը՝ կենսական անհրաժեշտություն: Եվ, ի լուր աշխարհի, նրանք հայտարարեցին նոր սովորած միտքը.<< Թող էլ ոչ մի ծնող չկորցնի իր որդուն, չլինի պատերազմ >>:

Պլանավորածի պես չստացվեց խմբային աշխատանքը, հատկապես՝ խաչաձև հարցումը: Ուշադրությունը կենտրոնացնելով իրենց խմբի հանձնարարության վրա՝ ուշադիր չէին լսում մյուսների պատասխանները և լրացումներ կամ մտքեր չէին արտահայտում: Նրանց բանավոր խոսքը մի փոքր տուժեց այդ պատճառով: Աշակերտները այս դասից սովորեցին, որ պատմվածքը մարդասիրության մեծ գաղափարի մարմնավորում է մի ոչ այնքան էլ սովորական օրինակով: Եվ հենց այն, որ, իրենց կյանքը փորձության ենթարկելով, հակառակորդ զինվորները բարեկամանում են, մեծ խորհուրդ է պարունակում: Պատմվածքում ներկայացված իրավիճակն ունի պատմական հիմք: Նրանք սովորեցին, որ մարդը ծնվում է ապրելու և արարելու համար, մինչդեռ պատերազմները մշտապես հրահրում են մեծ երկրները՝ իրենց ազդեցության գոտիներն

ընդլայնելու և հումքային պաշարներին տիրելու նպատակով: Դրանք զավթողական պատերազմներ են:

Դրան հակառակ այլ խորհուրդ է իր մեջ կրում հայրենիքի պաշտպանությունը, հայրենական պատերազմը՝ հայրենիքի ինքնիշխանությունն ու ամբողջականությունը պահպանելու և դրանով իսկ մարդկանց ապրելու, արարելու հնարավորություն տալու համար:

Նրանք իմացան, որ պատմվածքը կարելի է պատմել և՛ հեղինակի, և՛ գլխավոր հերոսի անունից, այսինքն՝ և՛ երրորդ, և՛ առաջին դեմքով:

Աշակերտները սովորեցին, որ բարբառային բառերի գործածությունը բանավոր խոսքին հաղորդում է համ ու հոտ, դարձնում ավելի բնական ու սրտամոտ ու հարստացնում բառապաշարը:

Իմ կարծիքով, ես հասա վերջնարդյունքներին: Աշակերտները կարողացան գնահատել ընկերասիրությունը, անձնազոհությունը, պատերազմը ժխտել, հաստատել խաղաղության արժեքն ու անհրաժեշտությունը:

Սովորողները իրենցը դարձրին շատ գաղափարներ և բառեր: Ես դա իմացա ընդհանուր հարց ու պատասխանի միջոցով: Բոլորն, առանց բացառության, մասնակցեցին դասերին:

Իմ ուշադրության կենտրոնում դասերի ընթացքում սովորողների համագործակցությանը հետևելը և փոխհամագործակցության միջոցով իրենց կարողությունները հմտությունների վերածելն էր, որը ինձ մոտ, կարծում եմ, ստացվեց:

Պետք է նշել նաև, որ, ելնելով սովորողների տարիքային- հոգեբանական առանձնահատկություններից, արժևորումը կատարելիս հիմնվեցինք ավելի շատ պատմվածքի դեպքերի և այսօր երկրում ստեղծված իրավիճակի համեմատության վրա: Սովորողները նկատեցին, որ շատ տարբերություն չկա այն ժամանակվա զինվորի և այսօրվա զինվորների միջև: Նրանք հաստատեցին այն գաղափարը, որ հայ զինվորը, որտեղ էլ մարտնչի, հայրենասեր է (Բաղդասարը կռվում էր այն թշնամու դեմ, որը, հաղթանակի դեպքում, կհասներ նաև Հայաստան), անձնազոհ, պատրաստ կռվելու մինչև վերջին շունչը, պատրաստ՝ կյանքը տալ ընկերոջ փրկության համար: Հայ զինվորը կռվում է հանուն խաղաղության, հանուն կյանքի, հանուն Մարդ մնալու և արարելու:

Ամփոփենք, բանավոր խոսքի զարգացումը պրոբլեմատիկ է բոլոր առարկաների ժամերին բոլոր դասարաններում: Միայն համագործակցությամբ կարելի է հասնել հիմնախնդրի լուծմահը:Բանավոր խոսքը զարգացնել բառապաշարի հարստացման միջոցով.այս հիմնախնդրի լուծումը կօգնի նաև ապագա քաղաքացու արժեքային համակարգի ձևավորմանը, հմտությունների կվերածի կրողությունները և մարդուն Մարդ կպահի:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. <<Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում>> ամսագրի տարբեր համարներ.
2. Աշոտ Տեր-Գրիգորյան. <<Հայոց լեզվի մեթոդիկա >>
3. Հնգօրյա վերապատրաստման ուղեցույց
4. Ձեռնարկներ. <<Հայոց լեզուն 10-12-րդ դասարաններում>>
   <<Հայ գրականությունը 10-12-րդ դասարաններում>>
5. Զաքարյան , Ավետիսյան <<Բառագիտություն>>

Հավելվածներ

ՓՈՐՁՆԱԿԱՆ ԴԱՍԻ ՊԼԱՆ 1

Առարկան-Գրականություն

Դասարան-7-րդ

Դասի թեման- Ստ. Զորյանի <<Զրհորի մոտ>> պատմվածքի գաղափարական բովանդակությունը:

Դասի նպատակը- Ուսուցանել պատմվածքի ժանրի առանձնահատկությունները: Վերլուծել պատմվածքի գաղափարական բովանդակությունը: Բացահայտել Բաղդասարի կերպարի բնորոշ գծերը:

Վերջնարդյունք- Կարողանա՝

_ **բնութագրել** Բաղդասարի արարքի դրդապատճառները.

_ **գնահատել** Բաղդասարի արարքը.

- **գնահատել** և արժևորել ընկերասիրությունը:

Հիմնական գաղափարներ, հասկացություններ- Պատմվածք, համաշխարհային պատերազմ, խաղաղություն:

Օգտագործվող մեթոդներ- Կանխագուշակումների աղյուսակ: Քառաբաժան:

ՈՒսումնական նյութեր- Զորյանի նկարը, ժողովածուներից երկուսը, դասագիրք,գրականության տետր, բառատետր:

Միջառարկայական կապ- Կինո, պատմություն, աշխարհագրություն, հայոց լեզու:

Ներդասընթացային կապ- Ստ. Զորյանի <<Պապն ու թոռը>> պատմվածքը:

Դասի տեսակը- Խառը տիպի:

Դասի ընթացքը- Կազմակերպչական մաս:

Խթանման փուլ/ 7ր/ – Տնային առաջադրանքի և գրականության տետրերի ստուգում (գրել տեղեկություններ Առաջին համաշխարհային պատերազմի մասին): Գրատախտակին մտագրոհի միջոցով վեր հանել սովորողների պատկերացումները պատմվածքի վերնագրի շուրջ:

Սովորողների ասած և ոչ մի բառը սխալ չհամարել. դասի՝ իմաստի ընկալման փուլում

աշակերտները կտարբերակեն ճիշտն ու սխալը: Ընդհանուր հարցերով պարզել, թե ինչ գիտեն սովորողները Առաջին համաշխարհայինի մասին: Առաջադրել հարցեր՝ կապված պատերազմին հայերի մասնակցության հետ:

Իմաստի ընկալում /25 ր/ – Շարունակելով թեման՝ խոսել <<Ջրհորի մոտ>> պատմվածքի սյուժեի մասին, պատմել մի մասը, ապա կիրառել <<Կանխագուշակումների աղյուսակ>> մեթոդը: 1.Ի՞նչ է լինելու: 2.Ի՞նչ փաստեր ունեմ: 3.Ի՞նչ եղավ:

. Պահանջել լրացնել առաջին երկու սյունակը: Հարցնել սովորողների մի մասին:

. Շարունակել սյուժեն և նրանց օգնությամբ լրացնել երրորդ սյունակը:

. ՈՒղղորդված ընթերցանությամբ (հատվածներն ընտրված են նախօրոք) վեր հանել պատմվածքի գաղափարական բովանդակությունը:Կատարել բառային աշխատանք:

Կշռադատում/7 ր/ – Հարցեր առաջադրել՝ կապված պատերազմի և խաղաղության նրանց պատկերացումների հետ՝ Վենի դիագրամով համեմատելով այդ հասկացությունները:

Անդրադարձ/5ր/ Ի՞նչ եմ սովորել այսօր: Արժևորում – Մարդկանց միջև պիտի իշխեն հանդուրժողականությունը, խաղաղասիրությունը, հանուն ընկերների կյանքը զոհելու պատրաստակամությունը:

Տնային առաջադրանքի հանձնարարում՝/1ր/ դասից դուրս գրել այն նախադասությունները կամ կապակցությունները, որոնք բնութագրում են Բաղդասարին: Լրացնել <<Քառաբաժան աղյուսակը>>:

ՓՈՐՁՆԱԿԱՆ ԴԱՍԻ ՊԼԱՆ 2

Առարկան - Գրականություն

Դասարանը - 7-րդ

Դասի թեման՝ Հինը - Ստ. Զորյանի <<Զրհորի մոտ>> պատմվածքի գաղափարական պատմվածքի գաղափարական բովանդակությունը:

Նորը - <<Զրհորի մոտ>> պատմվածքը (ամփոփում):

Դասի նպատակները – Ամրապնդել սովորողների գիտելիքները պատմվածքից:

Վերլուծել պատմվածքի գաղափարական բովանդակությունը:

Վերջնարդյունք – Կարողանալ՝

- ներկայացնել գլխավոր հերոսի կերպարը.
- գրական հայերենով արտահայտել գաղափարական բովանդակությունը
- մտքեր արտահայտել պատերազմի և խաղաղության մասին:

Դասի տեսակը – Ամփոփման դաս:

Հիմնական գաղափարներ, հասկացություններ – Առաջին համաշխարհային պատերազմ, Ավստրիա, խաղաղություն:

Ուսումնական նյութեր – Քարտեզ, դասագիրք, գրականության տետր:

Օգտագործվող մեթոդներ – Անահատական հարցում, խմբային աշխատանք, փոքրիկ շարադրանք:

Ներառարկայական կապ – Ստ. Զորյանի <<Պապն ու թոռը>>: Դեմիրճյանի <<Ավելորդ>> - ից պատերազմի հատվածը:

Միջառարկայական կապ – Աշխարհագրություն, Հայոց պատմություն, Հայոց լեզու:

Դասի ընթացքը – Կազմակերպչական մաս

Խթանման փուլ/ 7ր/ – Ընդհանուր հարցերով կրկնել պատմվածքի գաղափարական բովանդակությունը և ամենակարևոր հատվածներն ըստ աշակերտների: (Տնային աշխատանքի հանձնարարությունը):

Իմաստի ընկալում /25 ր/ Ստ. Զորյանի եռագրության վեպերի վերնագրերով դասարանը բաժանել 3 խմբի՝ <<Հայոց բերդը>>, <<Պապ թագավոր>>, <<Վարազդատ>>:

Խմբերին տալ հետևյալ առաջադրանքները՝ քարտերին գրված.

1. Մեկ – երկու նախադասությամբ ներկայացնել Զարյանին:
2. Թվարկել նրա առանցքային երկերը:
3. Հիշել՝ ինչ են անցել հեղինակից. <<Ավելորդը>> պատմվածքից կարդալ պատերազմի մասին տողերը: Ստուգել և լրացնել պատմությունները:

Հանձնարարել երկրորդ առաջադրանքը.

1. Ներկայացնել պատմվածքի համառոտ սյուժեն:

2. Վեր հանել պատմվածքի գաղափարը:
3. Վերլուծել Բաղդասարի կերպարը:

Ստուգել և գնահատել:

Երեք խմբերին էլ տալ պրոբլեմատիկ հարցեր՝

1. Ի՞նչ է բերում պատերազմը:
2. Ինչու՞ է անհրաժեշտ խաղաղությունը:
3. Ժողովուրդներն ուզու՞մ են պատերազմ:

Մտքեր փոխանակել՝ խաչաձև տարբերակով:

Կշռադատում/7 ր/ – Ի՞նչ կանեի ես, եթե լինեի Բաղդասարի փոխարեն:

Անդրադարձ/5 ր/ – Ի՞նչ սովորեցի այս պատմվածքից:

Արժևորում – Ընկերասիրությունը ինքնազոհություն է ենթադրում:

Պատերազմը չարիք է, խաղաղությունը՝ կենսական անհրաժեշտություն:

Տնային աշխատանք/1 ր/ – Նախապատրաստվել շարադրության՝ <<Մենք խաղաղասեր ենք, բայց….>>: